

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԼԵՋՎԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Գ. ՀԱԿՈՐՅԱՆ

Հայտնի է, որ արտաքին աշխարհի երևույթների մասին մարդու պատկերացումներն ու գիտելիքները անընդհատ փոխվում, վերանայվում, լրացվում և ճշգրտվում են: Նույնը վերաբերում է նաև ոչ արտաքին աշխարհի երևույթներին, ուրեմն նաև՝ լեզվին, մի երևույթի, որի մասին մեր իմացությունը նույնպես չի կարող, ինչպես ասում են, վերջնականորեն աքսիոմատիկ լինել: Ուստի սույն հոդվածի որոշ հարցադրումներ, հենված լինելով ելակետային մի շարք հանրահայտ բմբռնումների վրա, արծարծվող խնդրի սահմաններում, մեր կարծիքով, կարող են ունենալ լրացուցիչ պարզաբանող նշանակություն:

Լեզվի զարգացումը չափազանց բարդ կոմպլեքսային պրոցես է: Նույնիսկ լավ ուսումնասիրված կոնկրետ լեզուների համակարգերի տարբեր մակարդակներում փոփոխությունների ինչպե՞ս և ի՞նչ ճանապարհով կատարվելու, այդ ընթացքում ներքին և արտաքին գործոնների հարաբերակցման, համակարգի որակական մասնակի տեղաշարժերի կամ մի որակից մյուսին անցնելու օրենքների, միտումների և դրսևորումների մեջ նույնպես հաճախ հանդիպում են բավական դժվար բացատրելի երևույթներ: «Այն, ինչ հայտնի է, դեռ չի նշանակում, թե դրանով իսկ իմացված է», — զգուշացնում էր Հեգելը¹: Սակայն ճանաչման մեր մշտական ձգտումը մեզ անվերջ մոտեցնում է լեզվական փոփոխությունների պատճառական նորանոր կապերի բացահայտմանը, լեզվի դիալեկտիկայի իմացության ընդլայնմանը: «Մարդը չի կարող ընդգրկել, արտացոլել, արտապատկերել բնությունն ամբողջովին, լրիվ, նա կարող է միայն անվերջ մոտենալ դրան», — գրում է Վ. Ի. Լենինը²:

Առաջին հարցը, որին անդրադառնում ենք, «զարգացման համընդհանուր օրենքի» մասնակի դիտարկումն է լեզվի նկատմամբ:

Դիալեկտիկական մատերիալիզմը զարգացումը դիտում է որպես փոխադարձաբար միմյանց բացառող հակադրությունների պայքար և հակադրությունների միասնություն: Այստեղից էլ՝ հակադրությունների փոխհարաբերության վրա հիմնված զարգացումը՝ շարժումը, բացարձակ է, իսկ հակադրությունների՝ տարբեր դրսևորումներ ունեցող միասնությունը պայմանական է, ժամանակավոր, հարաբերական: Զարգացման ընթացքում նոր հատկանիշների աստիճանական կուտակումը՝ քանակական փոփոխությունների գումարումը, մի ինչ-որ որոշակի պահի անհրաժեշտաբար պետք է հանգեցնի արդեն արմատական, որակական փոփոխությունների, այսինքն՝ հին որակից նոր որակին թռիչքային, կտրուկ անցման և այլն:

¹ Гегель, Наука логики, т. I, М., 1970, էջ 83: Թարգմանությունը ըստ՝ Վ. Ի. Լենինի, Երկեր, հատ. 38, Փիլիսոփայական տետրեր, Երևան, 1962, էջ 99:

² Վ. Ի. Լենինի, Երկեր, հատ. 38, էջ 810:

Լեզվի դեպքում, ինչպես հայտնի է, գործ ունենք մի վիճակից մյուսին աստիճանական, սահուն անցման հետ: Նախ վոխվում են գոյություն ունեցող քերականական համակարգի առանձին տարրերը, ապա նոր միայն աստիճանաբար վերափոխվում, փոխակերպվում է համակարգը, այն էլ ոչ թե ամբողջությամբ. այլ միայն կառուցվածքային-տիպաբանական հիմնական գծերով: Համակարգի վերափոխմանը, բնականաբար, նախորդում են ենթահամակարգային փոփոխությունները, իսկ սրանց՝ առավել մասնավոր հատվածներում ընթացող տեղաշարժերը և այլն: Ընդ որում, պարտադիր չէ, որ փոփոխությունները զարգացման հեռանկարում անպայման հանգեցնեն լեզվական մի տիպի (հին տիպի) վերափոխմանը մեկ այլ տիպի (նոր տիպի): Նույնքան սովորական են նաև եղած համակարգերի ներքին կարգավորումն ու կատարելագործումը (օրինակ, սլավոնական լեզուների թեքականության համադրականության պահպանումը դրանց պատմական զարգացման ողջ ընթացքում):

Ընդհանուր առմամբ, միայն նոր հատկանիշների ինչ-որ չափով բավարար կուտակման դեպքում է հնարավոր խոսել լեզվական նոր որակի մասին, որը նախորդ վիճակի համեմատությամբ թեև սկզբունքորեն մի նոր աստիճան է, բայց այնպիսի, որ այս կամ այն կերպ պահպանում է զարգացման նախորդ կամ ստորին աստիճանի հատկանիշները: Կարելի է ասել, որ լեզվի նոր որակը հիմնականում արդեն ստեղծվածի և եղածի այնպիսի փոփոխությունների ամբողջությունն է, որ հնից որոշ գծեր անպայման պահպանելով՝ հինը չէ այլևս: Ուրեմն՝ չկա միևնույն ժողովրդի միևնույն լեզվի որևէ նոր որակ, որ իր անմիջական կամ հեռավոր «նախորդից» ոչինչ չունենա, որտեղ խզված լինի մերձավոր կամ հեռավոր ժառանգականությունը: Եթե կա, ապա դրանք տարբեր լեզուներ են: Զարգացման որևէ աստիճանում որակապես բոլորովին նոր կամ, այսպես ասած, մաքուր համակարգեր չեն կարող լինել. ամեն մի նոր համակարգ ունի որոշ թվով վերապրուկային տարրեր:

Լեզուն զարգանում է հին նյութի հիման վրա զանազան միջոցներով նորաձևությունների գոյացման, հին ձևերի նոր իմաստավորման, նոր իմաստների և սրանց արտահայտության նոր ձևերի ու միջոցների առաջացման, հին և նոր նույնիմաստ կամ մոտիմաստ ձևերի միջև տարբերակային հարաբերությունների ձևավորման, տարբերակների զուգահեռ գործածության մեջ ձևվերից մեկի կամ մյուսի ընտրության և այլ ճանապարհով:

Լեզվի առաջընթացի հիմքը հնի և նորի մշտական պայքարն է: Այստեղ առանձնապես էական են, ինչպես ասում են, հին նյութի կայունության և դիմադրության հաղթահարման ճիգերը:

Մեր կարծիքով, այդ ճիգերը բացահայտում են զարգացման հետ կապված առնվազն երկու հանգամանք: Մի կողմից՝ դրանք բնութագրում են լեզվական նոր որակի այս կամ այն տարրը կամ երևույթ՝ դրանց կենսունակության և ծավալման հեռանկարի առումով, մյուս կողմից՝ կարող են ցույց տալ լեզվական ենթահամակարգերի տարբեր մասերի տեղաշարժերի, միտումների ընդհանուր կամ մասնավոր ուղղությունը: Իրար սերտորեն հանգուցված այս երկու երևույթների հաշվառումը առանձնապես կարևոր է նորմավորման ժամանակ, երբ անհրաժեշտ է դառնում տարբեր առումներով կամ հայեցակետերով գնահատել լեզվական առկա փաստերը:

Ժամանակակից հայերենում, օրինակ, հին նյութի կայունության և դիմադրության հաղթահարման արտահայտություն է, երբ հոլովվելիս որոշ գոյականների հնչյունափոխված ձևն օգտագործվում է, հին հիմքերի դիմաց հետզհետե ավելի հաճախ են հանդիպում անհնչյունափոխ հիմքեր (վրձինի փխն. վրձնի. բլիթի փխն. բլթի. շապիկի փխն. շապկի, սառուկի փխն. սառկի և այլն): Թեև այսօր բլիթի-ն և բլթի-ն գեղես հանդիս են գալիս որպես տարբերակային լիարժեք հարաբերակիցներ, սակայն ելնելով այն իրողությունից, որ այժմ իսպառ դուրս են մղվել, օրինակ, մրնի (մուրն-ից), սրնի (սուրն-ից) տիպի կազմությունները (հմտ. մուրնի, սուրնի), իսկ շապկից, շապկով, սառկից և թեքված նման ձևերը բոլորովին գործածական չեն (հմտ. շապիկից, շապկով, սառուկից և այլն), կարելի է վստահորեն ասել, որ լիաձևությունը հանդես է գալիս որպես ծավալվող միտում՝ աստիճանաբար ընդգրկելով ավելի շատ թվով բառեր:

Կամ՝ մեկ այլ օրինակ, որը նույնպես նշված երևույթի դրսևորումներից է: Հայտնի է, որ այժմ գրական լեզվում ե խոնարհման պարզ և կրավորական ու բաղմապատկական ածանցավոր բայերի հրամայական եղանակի հոգնակի դրական ձևերը հավասարապես կազմվում են և՛ ներկայի, և՛ անցյալի հիմքերով՝ հանդես գալով որպես քերականական նույնանիշներ (գրե՛մ և գրեցե՛մ, գրվե՛մ և գրվեցե՛մ, գրոտե՛մ և գրուտեցե՛մ և այլն): Այս տարբերակներից ավելի հինն ու կանոնական համարվածը երկրորդ ձևերն են, որոնք, սակայն, իրենց տեղը աստիճանաբար զիջում են ներկայի հիմքով կազմվածներին: Այստեղ էլ շարժման ընթացքը միանգամայն հստակ ուղիվադված է, իսկ համառոտման, տնտեսման միտումը ավելի շատ հենվում է զուտ կիրառական գործոնների վրա:

Լեզվի զարգացման պրոբլեմի կենտրոնական հարցերից է նաև համակարգի տարբեր մակարդակների, ինչպես նաև ենթահամակարգերի առանձին մասերի շարժման անհամաչափության դիտարկումը: Հատկապես կարևոր է պարզել համակարգի տարբեր կազմիչ տարրերի հարաբերակցության, փոխադարձ պայմանավորվածության և միմյանցից կախվածության բնույթն ու աստիճանը: Վաղուց ապացուցված է, որ համակարգի կամ ենթահամակարգի մի տարրի փոփոխությունը միշտ չէ, որ անպայման ազդում է նաև մեկ այլ տարրի վրա կամ պարտադրաբար կախված է մյուսից: Նշանակում է՝ պատճառականությունը լեզվի մեջ միշտ միանշանակ չէ և հանդես է գալիս դրսևորման բաղմաղանություն: Այստեղից ելնելով էլ, օրինակ, ձևաբանական կամ այլ մակարդակի ընդհանուր, այսպես կոչված, համակարգային փոփոխությունները լեզվաբանները տարբերակում են մասնակի փոփոխություններից, որոնք կրում են խիստ տեղային (լոկալ) կամ եզրային (պերիֆերիկ) բնույթ:

Այս առումով, մենք կարծում ենք, որ նույնքան օրինաչափական է խոսել նաև առանձին համակարգերի և սրանց ենթահամակարգերի ներսում կամ միջև կատարվող փոփոխությունների, տեղաշարժերի երկու հիմնական տիպերի մասին: Փոփոխությունների և տեղաշարժերի այդ տիպերն առաջարկում ենք պայմանականորեն անվանել ներհամակարգային և միջհամակարգային: Ստորև բերվող օրինակներից պարզ կդառնա, որ փոփոխությունների այս երկու տիպերն էլ սկզբունքորեն հնարավորություն ունեն իրացվելու լեզվի զարգացման ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարաժամանակյա

կտրվածքներում: Լենինի ջանքերով, որ լեզվի որակական առաջընթացի համար շատ ավելի էական են տեղական ժամանակաշրջան ընդգրկող փոփոխություններն ու տեղաշարժերը, որոնք մեծ մասամբ վերաբերում են մեր առանձնացրած երկրորդ տիպին:

Առաջին՝ ներհամակարգային տիպին կարող են վերագրվել այն դեպքերը, երբ փոփոխությունը տեղայնացված է, օրինակ, որևէ ենթահամակարգում կամ սրա ավելի փոքր հատվածում և դուրս չի գալիս այդ սահմաններից, այսինքն՝ տվյալ ոլորտից դուրս ազդեցություն չունի, կամ՝ շատ քիչ ունի:

Քերենք օրինակներ:

Ժամանակակից հայերենի դ, տ, ք բաղաձայնները հայերեն և փոխառյալ բառերի մեջ որոշ դիրքերում ունեն նաև քմայնացած կամ փափուկ արտասանություն, մանավանդ առօրյա խոսակցական լեզվում: Այսպես՝ աղյուտանտ, դյուրին, Դյումա, ատյան, մատյան, էտյուդ, մասնակցություն, մեծություն և այլն: Նկատենք, որ նման քմայնացումը, ինչ-որ չափով տարածված լինելով, այնուամենայնիվ չի միտում օրինաչափության վերածվելու, քանի որ սրան ակտիվորեն հակակշռված են գրական լեզվի ուղղախոսության նորմաներին ավելի համապատասխանող, այսպես ասած, կոշտ արտասանության դեպքերը (հմտ. աղյուտանտ, մատյան, մեծություն և այլն):

Կամ՝ ժամանակակից հայերենի սահմանական եղանակի ներկայի ձևերը նույնպես, ունենալով իմաստաբանական լայն սպեկտր, գործածվում են նաև անցյալայնության և/կամ ապառնիության իմաստներով, որոնք երկրորդային գործառնություններ են և հիմնականում պայմանավորված են գործողության կամ եղելության նկատմամբ խոսողի (կամ պատմողի) ակտիվ գնահատողական վերաբերմունքով: Հմտ. «Իսկ Շապուհը գալիս հասնում է մեր Տիգրանակերտ քաղաքը: Նրան դեմ են կանգնում քաղաքի մարդիկ և քաղաքապահ գործը...», «Վաճառ... մեռնում է, տերությունն իր Հազկերտ որդուն թողնելով: Սա... թագավոր դառնալուն պես դիմում է Մծբինի մոտ եղած հունաց դորքերի վրա: Լտրպատականի դորքին էլ հրամայում է մեր երկիրը մտնել»³ և «—Հր՞, հիմի դո՞ւրս ես անում,— հարցրեց Սմբատյանը կնոջը՝ ետ նստելով աթոռին:— Ախր ո՞նց եմ դուրս անում,— զանգատվել սկսեց տիկինը...»⁴, «—Գնում եմ ես բանակ,— երեքից մեկն ասաց.— Գնում եմ ես կռիվ հայրենիքի համար...»⁵ և այլն: Ներկայի ձևերի այս բազմազործառնությունը (պոլիֆունկցիոնալիզմը) մենք գնահատում ենք որպես զուտ իմաստաբանական բնույթի տեղաշարժերի, փոփոխությունների ներհամակարգային տիպի արտահայտություն, քանի զեռ այդ տեղաշարժերը չեն հանդես եկել ենթահամակարգերից դուրս գտնվող երևույթների ձևաիմաստային զգալի փոխակերպումների:

Երկրորդ՝ միջհամակարգային տիպի հետ գործ ունենք այն դեպքերում, երբ փոփոխությունը բնութագրվում է կապակցությունների և ազդեցությունների համեմատաբար ավելի լայն ոլորտով, այսինքն՝ դուրս է գալիս մի առանձին համակարգի կամ ենթահամակարգի սահմաններից և թափանցում

³ Ս՝ ո վ ս և ս Խ ո Ր Ե Ն ա ջ Ի, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 261, 313:

⁴ Դ. Դ Ե Մ Ի Ր Ճ Յ Ա Ն, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1955, էջ 257:

⁵ «Մոմենտալ գրականության բնույթից» — Պոեզիա, Երևան, 1960, էջ 199:

մեկ այլ համակարգի կամ ենթահամակարգի մեջ՝ այդտեղ առաջացնելով նկատելի տեղաշարժեր և այլն։ Ներքին տարբերակումով, նույնպես պայմանականորեն, կարելի է առանձնացնել փոփոխությունների միջհամակարգային տիպի երկու հիմնական դրսևորում՝ առաջին, երբ առկա են բոլորովին անկախ համակարգերի փոխառնչվող երևույթներ, և երկրորդ, երբ փոփոխությունները, տեղաշարժերը կատարվում են միևնույն համակարգի ենթահամակարգային տարրերի միջև։

Պարզաբանենք սա համապատասխան մեկ-երկու դեպքի նշումով։

Հայոց լեզվի պատմությունից հայտնի է, որ ներգոյական հոլովի ում վերջավորությունից կազմությունը, իբրև կառուցվածքային հնարավորություն հոլովման համակարգից անցնելով խոնարհման համակարգին, սկզբունքային դեր է խաղացել աշխարհաբարի արևելյան տարբերակի սահմանական հղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների կազմավորման մեջ⁶։

Կամ՝ գրաբարի սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի ձևերում, իբրև երկրորդային գործառություններ, ըղձականության և / կամ պայմանականության եղանակային իմաստների համատեղումները⁷, որ միջին դարերում, ինչպես նկատում է Ա. Ալտրնյանը, դրանց գործածության մեջ որոշ խառնակություն և տարտամություն էին ստեղծում⁸, հետագայում աստիճանաբար հանգեցրին ձևաիմաստային փոխակերպումների։ Որոշ հին կազմություններ (գրաբարի առաջին և երկրորդ ապառնիները՝ գրիցեմ = գրեմ, կգրեմ, վազեցից = վազելու եմ, վազեմ, կվազեմ և այլն) «լեզվից դուրս ընկան և մեռան»⁹, որոշ ձևեր էլ վերաիմաստավորումով կազմեցին աշխարհաբարի նոր ինքնուրույն եղանակները (հմմտ. գրաբարի սահմանական եղանակի ներկա՝ գրեմ, և ժամանակակից հայերենի ըղձական եղանակի ապառնի՝ գրեմ և այլն)։

Լեզվի ընթացքային օրենքների և օրինաչափությունների բացատրման համար կարևոր է նաև դրա փոփոխությունների ու զարգացման դիտարկումը իբրև սկզբունքորեն անդարձելի երևույթի դրսևորումներ։ Բոլոր բնական լեզուները ժամանակի ինչ-որ հատվածում բաղկացած են վերջավոր կամ փակ համակարգերի և ենթահամակարգերի ամբողջությունից և այդպիսին լինելով՝ ունեն շարժման միայն մեկ՝ վերընթաց ուղղություն։ Սակայն սա բացարձակ չէ և մասնավոր մի շարք դեպքերում ունի նաև հակադարձ որոշ միտումներ։ Այսպես, օրինակ, լեզվական հին որակի որոշ տարրեր, մասնավորապես՝ պաշարային, որոնք դադարել են գործածվելուց դրանց հաղորդակցական սահմանի նվազման կամ այլ պատճառներով, կարող են իրադրային նոր հանգամանքների միջամտությամբ և / կամ զուտ լեզվական գործոնների ազդեցությամբ իրենց նույն իմաստով կամ իմաստային տեղաշարժերով կրկին կյանքի կոչվել և աստիճանաբար նորից լայն (կամ ոչ այնքան լայն) տարածում

6 Այս հարցին նվիրված ընդարձակ գրականություն կա. նշենք ամենավերջին հրապարակումներից մեկը՝ Վ. Հայոց լեզվի պատմական քերականություն, հատ. 2, Երևան, 1975, էջ 182։

7 Յեւ ոչ արկանեն գինի նոր ի տիկս հինս, ապա թէ ոչ տիկքն լատառին (— կպատովեն) և գինին ճնդու (— կթափվի). այլ առկանեն (— կաժեն, կլցենեն) զգինի նոր ի տիկս նորս, և երկորին լառնին (— կպահվեն), նոր կտակարան, Լիվոռնո, 1895։

8 Ա. Ալտրնյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արգի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 74։

9 Մ. Արեւոյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 318։

ստանալ: Այս վիճակը շատ լավ ծանոթ է ժամանակակից գրեթե բոլոր, այսպես կոչվող, «քաղաքակիրթ» լեզուներին: Օրինակ՝ հին հայերենի արքանյակ «սպասավոր, ծառա, գործակից, օգնական, հետևորդ» բառի նաև նոր՝ տերմինային իմաստավորմամբ (= «երկրորդային մոլորակ, որ պատվում է գլխավոր մոլորակի շուրջը»¹⁰) լայն գործածությունը հետագայում և հատկապես մեր օրերում (հմտ. արհեստական արքանյակ), որը կարելի է համարել այդ բառի իսկական վերածնունդը:

Ետագարծ նման միտումներ երբեմն նկատելի են նաև տարբեր լեզուների հնչյունաբանական-արտասանական ոլորտում: Դրանց արտահայտությունը կարելի է համարել, օրինակ, արտասանությունը գրությունը հարմարեցնելու, մոտեցնելու աստիճանաբար ավելի ինտենսիվ դարձող ձգտումը, արտասանական որոշ հին նորմաների վերականգնումները և այլն:

Ինչ վերաբերում է քերականական համակարգին, ապա այստեղ բնական ետագարծերը միանգամայն բացառված են, այնպես որ հին լեզվական որակից նոր որակի մեջ ինչ-ինչ տարրերի արհեստական ներմուծումները գործող նոր օրգանիզմի վրա պարզապես «մեռած պատվաստ» են և տարածման ու ընդհանրացման ոչ մի հեռանկար չունեն: Թե ի՞նչ պատճառով է քերականական համակարգում ետագարծությունը անբնական և առաջընթացին հակասող երևույթ, հայտնի է, և այդ մասին մենք չենք խոսի: Ասենք միայն հետևյալը: Մասնագիտական գրականության մեջ մեկ-մեկ նշվում են դեպքեր, երբ, օրինակ, ձևաբանական համակարգի որևէ երևույթ, ինչ-որ ժամանակամիջոցում թուլացած լինելով կամ բավարար ակտիվ չլինելով, հետագայում աշխուժանում է և համակարգի, այսպես ասած, եզրից մղվում է դեպի նրա կենտրոնական, միջուկային մասը, այսինքն՝ դառնում է տվյալ համակարգի կամ ենթահամակարգի հիմնական հակադրության եղանակներից մեկը (հատկապես բերվում են դեպքեր ժամանակի և կերպի քերականական կարգերի, ինչպես նաև հոլովման վերաբերյալ):

* * *

Այժմ մի քանի խոսք լեզվի զարգացման ներքին՝ ներլեզվական, և արտաքին՝ արտալեզվական, գործոնների մասին:

Ամենից առաջ և ընդհանուր կարգով ասենք, որ ներլեզվական գործոնները լեզվի տարրեր մակարդակների բաղկացական մասերի՝ իրար նկատմամբ ունեցած փոխհարաբերության, փոխներգործության արդյունք են: Դրանք մեծ մասամբ ներհամակարգային բնույթ ունեն, ինչպես որևէ համակարգի առանձին մասերի կամ ենթահամակարգերի, այնպես էլ լեզվական ամբողջ համակարգի շարժիչ, առաջնիչ հիմնական ուժերն են և հավասարապես կարող են գործել և՛ միջուկային, և՛ եզրային ոլորտներում: Այդ գործոնները թեև մշտական են, բայց բացարձակ չեն (կարող են, օրինակ, ունենալ ժամանակային սահմանափակումներ և այլն): Դրանցից շատերը անկախ հանդես չեն դալիս, այլ գործում են միաժամանակ, կամ ներքին և արտաքին գործոնները դրսևորվում են միասին: Ներքին գործոնների միջոցով, հաղորդակցման ընթացքում և հաղորդակցման գործնական նպատակահարմարու-

¹⁰ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 1, Երևան, 1969, էջ 210:

թյունից ու մշտական պահանջներից կախված, իրացվում է լեզվական մեխանիզմի կանոնավորման և ինքնակարգավորման ներքին ձգտումը և այլն:

Լեզվաբանական գրականության մեջ, որոշ խմբավորումով, նշվում են միօրինակության (երբեմն սրան է միացվում նաև լեզվական միջոցների, այսպես կոչված, ստանդարտացումը), համառոտության, տնտեսման¹¹, համանուններից խուսափելու, արտասանության հեշտացման, համակարգերի և ենթահամակարգերի հակադրվող անդամների միջև դինամիկ հավասարակշռության պահպանման և մի շարք այլ ներքին գործոններ՝ միտումներ:

Մենք հնարավոր ենք համարում սրանց ավելացնել (կամ որպես այդպիսին ընդունել) ևս մեկ միտում՝ լեզվական միավորի առաջնային և երկրորդային (հիմնական և մասնավոր) իմաստների առանձնացման, տարբերական և ինքնուրույնացման երևույթը: Նկատի ունենք այն դեպքերը, երբ ծագումնաբանորեն ընդհանուր որևէ միավորի առաջնային և երկրորդային իմաստները մի կողմից՝ կոնտեքստի «ճնշման» տակ, մյուս կողմից՝ տվյալ միավորին հատուկ իմաստաբանական ծավալման հետևանքով անկախության չափ իրարից անջատվում-հեռանում են, և արդյունքում ստացվում է սովորական բաղմիմաստության միջոցով համանունության գոյացումից փոքր-ինչ տարբերվող դրույթուն: Այսինքն՝ ելակետալին միևնույն միավորը իմաստաբանորեն երկփեղկվում է, առաջնային և երկրորդային իմաստները, գործածության հանգամանքներով պայմանավորված, աստիճանաբար անկախանում են: Այս պրոցեսում մեզ համար ամենակարևորն այն է, որ բովանդակորեն անջատված միավորները պատկանեն տարբեր մակարդակների՝ մեկը, ասենք, բառային իմաստների ոլորտին, մյուսը՝ քերականական կամ բառային-քերականական և այլն:

Մենք փորձել ենք, օրինակ, այս միտումի իրացումով բացատրել հայերենի ծագումնաբանորեն ընդհանուր անվանական և բայական առ (հատբայարմատից՝ հատանել||հատել) ածանցով կազմված դանկտել (*դանակատել), ծվատել, խզրատել, թղթատել, թրատել և այլ բայաձևերի իմաստային-բովանդակային անցումների, զուգահեռականության կամ համատեղում-

¹¹ Մասնավորապես այս երեք միտումները, մեր կարծիքով, որոշակիորեն ունեն նաև իրենց հակադարձ դրսևորումները, իհարկե ոչ նույն ընդգրկումով: Դրանց կայունությունը միայն հարերական է, քանի որ, ասենք, միօրինակությանը խոսքի որոշ ոլորտներում (գեղարվեստական խոսք, հոնտորական խոսք և այլն) կտրականապես հակադրվում է արտահայտչականության աճի պահանջը, այլ կերպ ասած, լեզուն մի կողմից՝ ձգտում է ավելցուկային տարրերի նվազեցման, մյուս կողմից՝ զգացվում է այդ տարրերի աճի անհրաժեշտություն, կամ՝ բառերի բնական կարճացման ձգտումին մշտապես հակադրված է նորանոր «ներկար» բառերի ստեղծման պահանջը:

Այս կապակցությամբ կուղենայինք հայտնել նաև մի նկատառում: Երբ լեզվական միջոցների տնտեսման և համառոտության բնական ընթացքը ինչ-որ չափով մատնվում է ինքնահոսի և դուրս է մնում լեզվաբանական հսկողությունից, մոլախոտի պես ակտիվանում են ժարդոնային հայզրակ (=հայ գրականություն), քվար (=թվաբանություն), մաքեմ (=մաթեմատիկա), աֆզլ (=անգլերեն), կամ՝ գալո (=галстук), ցիլո (=ցիլինդր), դիսո (=դիսերտացիա) տիպի ապօրինի սկզբնականությունները: Ել շենք խոսում այն դեպքերի մասին, երբ, ասենք, համառոտության միտումը արտաքին հախուռն «գիշաղկցական» միջամտությամբ ուղղակի բռնադատվում է (տե՛ս, օրինակ, Ա. Մ ր Զ ա ն յ ա ն, Գիտատեսիսիկ կարճ լեզու, «Գարուն», 1973, № 8 և սրա դեմ գրված՝ Հ. Հ ա կ ր յ ա ն, Տերմինի կարճություն, մի՞թե միայն սա բավարար է, «Գարուն», 1974, № 3):

ների հնարավորությունը, ինչպես նաև սրա հետ կապված՝ այդ ածանցի քերականական՝ կերպային յուրահատուկ իմաստի ձեռքբերումը¹²:

Հայտնի է, որ ևս ածանցով ունենք, այսպես ասած, անվանականի և բայականի բայախմբեր՝ գլխատել, ջլատել և խաժատել, կոտրատել և այլն, որոնք տարբերակված են ոչ միայն բառակազմական առանձնահատկություններով, այլև ավելի շատ և արմատապես աչքի են ընկնում իմաստային զանազանությամբ: Առաջին տիպի բայերում ածանցի նշանակությունը բացառապես կապված է արմատի հետ, ուստի և գերիշխում է կտրելու, հատելու, անջատելու իմաստը: Երկրորդ տիպի բայերում բացահայտ գերակշռում է գործողության կրկնության իմաստը: Այստեղ ածանցի առաջնային (արմատական) նշանակությունը գրեթե ամբողջությամբ վերաիմաստավորվել է՝ կտրելու, հատելու նախնական կոնկրետ իմաստից, այդ գործողության բնույթի մեջ եղած կրկնվելու պոտենցիալ հնարավորության շնորհիվ, երկրորդաբար անցնելով բազմապատիկության գաղափարին: Վերաիմաստավորման այս պրոցեսը պատմականորեն հնարավոր էր միայն համանման մի շարք ձևերի մեջ ածանցի իմաստային բեռացման դեպքում, երբ որոշ բայերի մեջ ածանցը հստակորեն պահպաներ իր առաջնային նշանակությունը, իսկ մյուսների մեջ անկախանար որպես քերականական կամ բառային-քերականական ածանց և այլն: Մի խոսքով, արդյունքը եղել է այն, որ ևս-ը երկփեղկվելով՝ ձեռք է բերել մի տեսակ եռակի արժեք՝ կամ զուտ բառակազմական (իմաստային ի՛ր հատկացումներով)՝ ջիլ+ատ>ջլատել, կամ զուտ քերականական (իմաստային ի՛ր հատկացումներով)՝ կոտրել>կոտրատել, և կամ հավասարապես ներառել է այս երկուսը, որոնք, միևնույն է, աստիճանաբար միտում են անկախացման: Համեմատիր, օրինակ, րդբեր հատել կապակցությունից զոյացած րդրատել ածանցավոր բայի իմաստային երկակի դրսևորումները՝ «գրքի թերթերը կտրելով իրարից բաժանել, անջատել և այլն» (ածանցի առաջնային՝ բառակազմական իմաստ) և «գիրք կամ որևէ նման բան թերթել, զանազան թղթեր հատ-հատ նայել և այլն» (ածանցի երկրորդային՝ քերականական իմաստ): Նշենք, որ ժամանակակից հայերենում նկատելիորեն ավելի ակտիվ ու գործուն է երկրորդ իմաստը:

Արտալեզվական գործոնները կապված են լեզվի այս կամ այն կողմի վրա ներկայորոշ արտաքին ազդեցությունների հետ և սրանց փոփոխությամբ իրենք էլ սովորաբար փոխվում են: Լեզվի տարբեր մասերում այդ գործոնները տարբեր բնույթ ունեն. մի դեպքում կարող են ավելի ակտիվ դրսևորվել, մյուսում՝ ոչ, մի դեպքում ավելի լայն ընդգրկում ունենալ, մյուսում՝ ոչ և այլն:

Այդ գործոնները, ինչպես հայտնի է, առաջին հերթին բնութագրվում են որևէ համակարգի և տվյալ համակարգից դուրս գտնվող արտահամակարգային երևույթների կապերով, որոնք իրացվում են գերազանցապես միակողմանի կախվածության հարաբերությամբ: Այստեղ ազդեցության հնարավոր կայուն և հիմնական ուղղությունը միայն, այսպես ասած, դրսից ներս է: Սա նշանակում է, օրինակ, որ ժողովրդի պատմության ընթացքը սկզբունքորեն կարող է ազդել այդ ժողովրդի լեզվի ճակատագրի վրա:

¹² Մանրամասն տե՛ս Հ. Հակոբյան, Հայերենի բաղադրատեսակական ածանցները և ածանցավոր բայերը, «Բառարանագրության և բառագիտության հարցեր», Երևան, 1972, էջ 202:

Հայտնի է, որ արտաքին գործոնների ազդեցությունը մեծ մասամբ բաշխվում է լեզվի ընդհանուր համակարգի եզրային մասերում: Սակայն դրանք երբեմն կարող են ունենալ ավելի լայն ներգործություն, եթե չեն հակադրվում կամ հակասում լեզվի ազգային հատկանիշներին և ներքին օրինաչափություններին: Կամ կարող են դառնալ ներքին այս կամ այն գործոնի հրահրման պատճառ՝ ակտիվացնելով լեզվի որևէ մակարդակում (ամենից հաճախ՝ հնչյունաբանական-արտասանական ոլորտում և բառակազմության մեջ) ներունակությամբ ընթացող երևույթները և այլն: Մեկ-մեկ էլ, ինչպես վերևում նշել ենք, արտաքին և ներքին գործոնները, իրար լրացնելով, հանդես են գալիս համատեղ: Այս մասին կարելի է, օրինակ, խոսել այն դեպքում, երբ քննում ենք արտասանության կանոնականության իրադրային պայմանավորվածության հարցը: Բավական է համեմատել պաշտոնական խոսքը և ազատ, անկաշկանդ խոսքը՝ համոզվելու համար, որ երկրորդի մեջ խախտումներն ու անկանոնությունները ավելի շատ են¹³:

Մենք կարծում ենք, որ արտալեզվական գործոնների ազդեցության ոլորտը նույնպես կարելի է որոշ հիմաստով կոնկրետացնել լեզվի դարգացման երկու կարգի երևույթների սահմաններում: Որոշ պայմանականությամբ, ազդեցության ոլորտներից մեկը հնարավոր ենք համարում անվանել «բուն լեզվախան», երբ ազդեցությունները հիմնականում կրում են համաժամանակյա, անցողիկ բնույթ (թեև սրանց հետևանքները ինչ-որ չափով կարող են նաև հարատևել և ապա արմատանալ): Նշենք միայն մի երկու դեպք՝ օտար ազդեցությունների հետևանքով որոշակի ժամանակաշրջանում ինչ-ինչ փոփոխություններ են կատարվում, ասենք, արտասանության մեջ, կամ՝ պատճենավորման միջոցով աշխուժանում է բառակազմական որևէ կաղապար և այլն:

Ոլորտներից մյուսը, նույնպես խիստ պայմանականորեն, կարելի է վերագրել «լեզվի պատմությանը», երբ ազդեցությունները բնույթով տարածամանակյա, տևական լինելով՝ առնչվում են նաև, օրինակ, տարածքային, աշխարհագրական և այլ կարգի գործոնների հետ: Այսպես՝ լեզվի դարգացման ընթացքի ղգալի կախվածությունը տվյալ լեզուն կրող հանրության տարածքային բաշխվածությունից և այլն:

Ինչպես ասվեց, այս տարբերակումը միայն պայմանական է, քանի որ իրականում այդ երկու ոլորտները իրարից անջատ չեն, շատ հաճախ միևնույն պրոցեսի միասնաբար դրսևորվող երկու կողմերն են, իրար «կապակցված մոմենտները»¹⁴: Այնուամենայնիվ, դրանց անջատ դիտարկումը լեզվի պատմության տեսակետից կարող է արդյունավետ լինել: Գիտենք, որ լեզուն բաղկացած է տարբեր մասերից, տարբեր մասերով էլ հենց «շարժվում է», դարձանում: Ճանաչելու համար և՛ այդ մասերը, և՛ այդ մասերի դարգացման ընթացքն ու փուլերը դրանք հարկավոր է դիտարկել իրարից անջատ, առանձին-առանձին, այսինքն՝ հարկավոր է մասերից գնալ դեպի ամբողջը կամ հետևողականորեն կիրառել «միացնելու համար նախ պետք է անջատել» բանաձևը, չմոռանալով երբեք, որ այդ բաժանումը զուտ պայմանական է:

¹³ Առհասարակ հնչող խոսքում, մանավանդ այն, որը շունի տեքստային ամրագրում (բեմական խոսք և այլն), լեզվական ողջ համակարգի շարժունությունը շատ ավելի ակտիվ է: Բուն իմաստով, լեզուն հենց այդտեղ՝ հնչող խոսքում է աստիճանաբար փոխում իր կերպարանքը:

¹⁴ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 38, էջ 325:

К ВОПРОСУ О РАЗВИТИИ ЯЗЫКА

Г. Г. АКОПЯН

(Резюме)

Основой развития языка является борьба между старым и новым, в процессе которой выявляются два важных момента: перспектива распространения элементов нового языкового качества и направление общих и частных тенденций изменения разных уровней языковой структуры. Целесообразно разделить эти изменения на два основных типа — внутрисистемные и межсистемные.

На примере двух глагольных групп армянского языка с суффиксом -at- (ср. *glxatel* и *xacatel*) в статье делается попытка охарактеризовать разделение первичных и вторичных значений языковой единицы как проявление внутриязыкового фактора развития языка.